

Թամարա Պողոսյան  
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ, բակալավր, 4-րդ կուրս  
Գիտ. դեկ.: բ. գ. թ., դոց. Ա. Յայրապետյան  
Էլ. փոստ՝ [tamara\\_poghosyan@mail.ru](mailto:tamara_poghosyan@mail.ru)

## ԱՐԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՅԻՇՆՈՒՄ ԵՎ ԱՎԳԼԵՐԵՆՈՒՄ

Շարահյուսական կապակցության եղանակներից մեկն առդրությունն է: Կապակցության այս եղանակը լայնորեն տարածված է աշխարհի տարբեր լեզուներում: Այն բնորոշ է ինչպես այն լեզուներին, որոնցում բացակայում են ածանցները, օրինակ՝ վիետնամերենում, այնպես էլ այն լեզուներին, որոնցում կան ածանցներ և բառքերականական ձևեր: Օ. Ախմանովան առդրությունը ներկայացնում է որպես շարահյուսական կապակցության եղանակ, որի դեպքում մի անդամի կախվածությունը մյուսից արտահայտվում է միայն շարադասությանը, այսինքն՝ առանց սպասարկու բառերի և ձևաբանական փոփոխությունների:

Գրաբարում որոշիչ+որոշյալ կապակցությունը կարելի է բնութագրել ինչպես առդրությամբ, այնպես էլ համաձայնությամբ: Եթե որոշիչն արտահայտվում էր ածականով, ապա, ինչպես նշվեց համաձայնության բաժնում, ետաղաս որոշիչը դեմքով և թվով համաձայնում է իր լրացյալին, բայց ետաղաս գործածությամբ ևս հանդիպում են անհամաձայնության դեպքեր: Նախադաս գործածության դեպքում բազմավանկ ածականները հոլով ու թվով չեն համաձայնում գոյականներին, ինչպես՝ վաճական միավանկ ածականները համաձայնում է իր գոյականին, բայց հոգնակի նախադաս միավանկ ածականները համաձայնում է իր գոյականին, բայց հոգնակի նախադաս միավանկ ածականներում, օրինակ՝ գործականում, ածականը թվով չէր համաձայնում գոյականին՝ մեծաւ տենչանօք, մեծաւ անարգանօք: Ետաղաս քանակական նույն գոյականին՝ մեծաւ տենչանօք, մեծաւ անարգանօք: Ետաղաս քանակական հոգվանը հիմնականում չէր համաձայնում գոյականին ուղղական և հայցական հոգվանը հիմնականում չէր համաձայնում գոյականին և հայցական հոգվաններում և կապակցվում էր առդրությամբ՝ առուրս քառասում: Նախադաս կիրառություններում և կապակցվում էր առդրությամբ՝ առուրս քառասում: Նախադաս կապակցվում թյան դեպքում քանակական և դասական թվականները գոյականին կապակցվում թյան առդրությամբ, քանակականի հետ գոյականը դրվում էր եզակի և հոգնակի թվով՝ ին առդրությամբ, քանակականի հետ գոյականը դրվում էր եզակի և հոգնակի թվով՝ ի տասն դրահեկանէ, իսկ դասականի հետ՝ միայն հոգնակի՝ յիններոդ օրեն: Չնայած մի, երկու, երեք, չորր թվականները համաձայնում էին գոյականի հետ՝ երբեմն մի, երկու, երեք, չորր թվականները համաձայնում էին գոյականի հետ՝ միայն հոգնակի՝ յիններոդ օրեն: Նման կապակցվում էին առդրությամբ՝ երեք մանկամբք (Եզնիկ), յերեք ժամուց (Ազ): Նման դեպքերը հիմնականում մատենագրության մեջ են հանդիպում: Գրաբարում առդրությամբ էր արտահայտվում նաև ստորոգյալ+պարագա կապակցությունը, ինչպես՝ շինու անդ, տիրելի վերայ և այլն:

Չին անգլերենում ևս առդրությունը վերաբերում էր այն խոսքի նասերին, որոնք ձևականորեն փոփոխության չեն ենթարկվում: Այդ պարագայում դրանք չեն կարող կառավարվել կամ համաձայնել այն բարի հետ, որից կախված էին: Այդպիսի խոսքի մաս էր նաև և առաջ մակրայք: Չետևաբար ստորոգյալի և պարագայի կապակցությունը տեղի էր ունենում առդրությամբ՝ *hāter zrētan lufice frēond-līce* (Չրամայում է ներկա լինել սիրառասորեն և ընկերաբար)<sup>1</sup>:

Առդրությամբ միջին հայերենում կապակցվում էին որոշիչն ու որոշյալը: Դրանք չեն համաձայնում թվով, դեմքով և հոլովով: Բայց կային դեպքեր, երբ որոշիչը որոշյալին թելադրում է իր թիվը. կային ածականներ, որոնց արտահայտած ինաստը պահանջում էր հոգնակի որոշյալ, ինչպես շատ, բազմազան, տարբեր, օրինակ՝ շատ

<sup>1</sup> Տե՛ս Ախմանով Օ. Ս., Սլովար լունգվիստիկ տերմինու, Մոսկվա, 1966, с. 437-438:

<sup>2</sup> Տե՛ս Իլյան Բ. Ա., Իստորիա անգլիական լեզվա, Մոսկվա, 1955-1956:

**ծառայք, տարբեր տունք և այլն:** Միջին հայերենում առդրությամբ էր արտահայտվում նաև ստորոգյալ+պարագա կապակցությունը, բայց կային դեպքեր, երբ որոշիչը որոշյալին թելադրում է իր թիվը. Կային ածականներ, որոնց արտահայտած իմաստը պահանջում էր հոգնակի որոշյալ, ինչպես՝ շատ, բազմազան, տարբեր, օրինակ՝ շատ ծառայք, տարբեր տունք և այլն: Միջին հայերենում առդրությամբ էր արտահայտվում նաև ստորոգյալ+պարագա կապակցությունը, ինչպես՝ Այսօր եղև պայծառ գարուն, Անդ նատի մեղուն և զջուրն առնու: Բ. Իլիշը նշում է, որ միջին անգլերենում առդրությունը եական փոփոխությունների չենթարկվեց, բայց համաձայնության նվազմանը գուցահեր դրա տարածման սահմաններն ընդլայնվեցին: Որոշիչ ածականները որոշյալ գոյականի հետ շարահյուսորեն կապակցվում էին համաձայնությանը, բայց միջին անգլերենում այլևս չէր գործում դրանց համաձայնությունն ըստ սերի և հոլովի, մասամբ նաև ըստ թվի: Այն ածականները, որոնք եզակի թվում վերջանում էին -e-ով, հոգնակի ծևում տարբերություն չէին ցուցաբերում եզակից: Այդ ածականների համար առդրությունը դարձավ դրանց շարահյուսական կապի արտահայտման եղանակ: Բ. Իլիշը բերում է առդրության հետևյալ օրինակը, որտեղ ածականում թվի բերականական կարգը չի արտահայտվում, այդ պատճառով դրա շարահյուսական կապը որոշյալ գոյականի հետ արտահայտվում է առդրությամբ՝ *strange strondes*՝ օտար ափեր:

Ժամանակակից հայերենում առդրությունը բնորոշ է ստորև ներկայացվող կապակցություններին:

1) որոշիչ+որոշյալ, 2) ստորոգյալ+պարագա: Նույնը վերաբերում է նաև ժամանակակից անգլերենին: Քանի որ անգլերենին թեքականությունն առանձնապես հատուկ չէ, առդրությունը միավորների շարահյուսական կապի ամենատարածված տեսակն է, օրինակ՝ *long practice* (երկար պրակտիկա), *trembled slightly* (թերևակի դողաց):

Անգլերենի բերականության մեջ առանձնացնում են նաև այսպես կոչված միակցումը (enclosure), երբ մի բաղադրիչը տեղադրված է շարահյուսական կապակցության մյուս բաղադրիչների միջև: Դրա ամենավառ արտահայտությունն անգլերենում այն է, երբ բառը դրվում է հոդի և այն գոյականի միջև, որին այդ հոդը վերաբերում է, օրինակ՝ *a beautiful girl*, որտեղ *beautiful*/ածականը ներդրված է ա անորոշ հոդի և *girl* գոյականի միջև: Լեզվաբանների մեջ մասը միակցումն ընդունում է որպես առդրության ենթատեսակ: Որոշ լեզվաբաններ այն կարծիքն են հայտնում, որ առդրության հիմնականում կապակցվում են ճակարանները<sup>1</sup>: Ի. Տիվյալան անգլերենի տեսական բերականության դասախոսություններում նշում է, որ միայն ճակրայը կարող է բային այս եղանակով միանալ, քանի որ այն չունի բերականական կարգեր, որոնք թույլ կտային համաձայնել այլ բառի հետ կամ կառավարվել նրա կողմից: Հետաքրքիր է, որ նա առդրությունն առավել բնորոշ է համարում ռուսերենին, իսկ անգլերենին, ըստ նրա, հատուկ է հիմնականում միակցումը: Ինչպես նշվեց, միակցումը ոմանք առդրության ենթատեսակ են համարում: Միակցման ամենալավ օրինակը որոշչի գործածությունն է անորոշ հոդի և գոյականի միջև՝ *a pretty face* (սիրունիկ դեմք), *a perfect man* (կատարյալ մարդ), *one good essay* (մի լավ էսե): Ածականներից և գոյականներից բացի՝ շատ այլ բառեր կարող են այդ դիրքում լինել: Հետևյալ օրինակում՝ *The then president* (այն ժամանակվանիսականի), *then* մակրայը հոդի և գոյականի միջև է, այն ծառայում է որպես գոյականի որոշչ: Ի. Տիվյալան բերում է հետևյալ օրինակը՝ *ago-to-devil*, որտեղ դո-լո-դևիլը գտնվում է անորոշ հոդի և այն գոյականի միջև, որին այդ հոդը վերաբերում է: Սա բնութագրում է արտահայտության շարահյուսական կապը: Ա. Ռավինինան անգլերենի տեսական բերականության դասընթացում ևս անդրադառնում է միակցմանը և բերում այսպիսի օրինակներ՝ *to thoroughly think over* (հիմնվին

**խորհել), the then government (այն ժամանակվա կառավարությունը), an interesting question (հետաքրքիր հարց):**

Անգլերենի վերաբերյալ թերականական աշխատություններից մեկում լեզվաբանները առդրությամբ կապակցվող բառերի մասին նշում են, որ առդրությունն առանձին, համաձայնությունը և կառավարումը համատեղ ներկայանում են որպես երկաստիճան փուլ: Առաջին աստիճանում համախմբվում են այն բառերը, որոնց արժեքային միջոցները թույլ են տալիս նրանց համատեղ գործածությունը: Այն բառերը, որոնք ծևային փոփոխության չեն ենթարկվում, այստեղ կանգ են առնում, և հենց այս եղանակն է առդրությունը: Զևյային փոփոխության ենթարկվող բառերն այստեղ կանգ չեն առնում և անցնում են հաջորդ փուլ, որտեղ փոփոխում են կամ երկու բաղադրիչների ծևերը (համաձայնություն), կամ միայն բաղադրիչներից մեկի ծևն է փոփոխում (կառավարում)<sup>2</sup>:

Ժամանակակից անգլերենում առդրության դերը մեծ է: Այդ դերը հիմնականում մեծանում է համաձայնության նվազման հաշվին: Ինչպես նշվեց, առդրությամբ են կապակցվում որոշիչն ու որոշյալը: Այս հարցում բացառությունը միայն այն դեպքը, երբ որոշչի դերում են *this, that* ցուցական դերանունները, քանի որ դրանք որոշյալի հետ համաձայնում են թվով: Առդրությամբ է արտահայտվում նաև ուղիղ խնդրի և ստորոգյալի կապը: Այս դեպքում բացառություն են միայն անձնական *I, he, she, we, they* դերանունները (մասամբ հարցահարթական *who* դերանունը): Դրանք ունեն խնդրառական հոլովածե, որը գործածում են կառավարման ժամանակակ: Առդրությամբ է բնութագրվում նաև պարագայական բառի, որոշյալ ածականի հարաբերությունը բայի կամ մակրայի հետ: Յոդի կամ նախորդի և գոյականի միակցումը լայն տարածում է գտել ժամանակակից անգլերենում: Ըստ Բ. Իլիշի՝ միակցումը հնարավոր է նաև պարագայական բառերի համար, որոնք գտնվում են ստորոգյալի ներսում, եթե այն արտահայտված է վերլուծական բայական եղանակով կամ ստորոգելիական վերաբրուկ, բերենք օրինակ՝ *I shall still be waiting for you*: Միակցումը բնորոշ է նաև այն պարագային, որը բնութագրում է գործողության տևողությունը<sup>3</sup>:

Ժամանակակից հայերենում որոշիչ+որոշյալ կապակցության համար Ս. Ասատրյանն առանձնացնում է չորս մանրակաղապար՝, որոնց համար բերենք համապատասխան օրինակներ՝ գուցահեր առանձնացնելով նաև այս կապակցության ժամանակակից անգլերենին բնորոշ կաղապարները՝

ա) ածական+գոյական՝ *գունավոր մատիտներ*, շեն բնակարան: Նույնը բնորոշ է նաև ժամանակակից անգլերենին՝ *a beautiful girl*՝ գեղեցիկ աղջիկ, *a large house*՝ ընդհարձակ տուն:

բ) թվական+գոյական՝ տասը բժիշկ, *յոթերորդ իրաշալիք*: Նույնը նաև անգլերենում՝ *twenty four hours*՝ քսանչորս ժամ, *the second floor*՝ երկրորդ հարկ:

գ) Յարակատար, ենթարկայական, ապակատար դերբայներ+գոյական՝ սպասված/ սպասվող/սպասվելիք հաղթանակներ, նվաճումներ: Անգլերենում անորոշ դերայի+գոյական՝ *letters to answer*՝ նամակներ պատասխանելու համար, *money to pay*՝ վճարելու գումար, ածական դերբայ+գոյական՝ *a running man*՝ վազող մարդ, *a dancing girl*՝ պարող աղջիկ, ինչպես նկատում ենք, թարգմանելիս հանդպատասխանում է հայերենի ենթարկայական դերային, *a broken chair*՝ կոտրված աթռո, *a worn dress*՝ կրած զգեստ, թարգմանելիս համապատասխանում է հայերենի հարակատար դերբային:

դ) Դերանում+գոյական՝ այսքան/այդքան/այնքան բնակիչ, այս/այդ/այն մանկավարժը: Նույն առկա է նաև անգլերենում՝ *another teacher*՝ ուրիշ ուսուցիչ, *so many people*՝ այսքան շատ մարդիկ: Բացառություն է միայն այն դեպքը, երբ որոշչի

<sup>1</sup> Տես Իվանովա Ի. Պ., Բորլակովա Վ. Վ., Պուշենով Գ. Գ., Տեօրետիկ գրամմատիկա ժամանակակից անգլիական լեզվի համար, Մոսկվա, 1981, էջ 132-133:

<sup>2</sup> Տես Իլյան Բ. Ա., նշվ. աշխ., էջ 60-61:

<sup>3</sup> Տես Ասատրյան Ս., ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987, էջ 60-61:

դերում են this, that ցուցական դերանունները, քանի որ դրանք որոշակի են համաձայնում են թվով՝ this book-these books՝ այս գիրը-այս գրքերը, that table-those tables՝ այդ սեղանները:

Ժամանակակից անգլերենին բնորոշ են նաև հետևյալ կադապարները՝

ա) գոյականը սեռական հոլովկով+գոյական՝ a boy's book՝ տղայի գիրքը, a sister's dress՝ քոր զգեստը: Դժվար չէ նկատել, որ նման կադապար կարող է լինել նաև հայերենում, օրինակ՝ սարի ծաղիկ, պատի ծամացույց, բայց այս կապակցությունները, թեև ընդունվում են որպես որոշիչ և որոշյալ, կարող են դիտվել որպես հատկացուցիչ և հատկացյալ, որոնք կապակցվում են խնդրառությամբ (իհենք, որ որոշ լեզվաբաններ այս կապակցությունն առդրություն են համարում):

բ) Գոյականը նախդրի հետ+գոյական՝ a girl with curly hair՝ գանգուր մազերով աղջիկ, a flock of birds՝ թռչունների երամ: Այս կադապարը հայերենին բնորոշ չէ:

գ) Մակրայ+գոյական՝ room upstairs՝ վերի սենյակ, man near the door՝ դռանը մոտ մարդ: Նման կադապար բնորոշ է նաև հայերենին, ինչպես՝ բակից հեռու ծառ, խելքին մոտ գաղափար:

Ստորոգյալ+պարագա կապակցության համար արդի հայերենում առանձնացնում են հետևյալ կադապարները, որոնց ցուցահեռ փորձել ենք առանձնացնել նաև կադապարներ արդի անգլերենի համար՝

ա) տարբեր տեսակի մակրայներ+բայ՝ Դաճախ է ժպտում, Անչափ հոգնած էին, Մոտ էին կանօնած և այլն: Նույնը նաև անգլերենում՝ He opened the door slowly (Նա դանդաղորեն բացեց դուռը), He often visits his parents (Նա հաճախ է այցելում իր ծնողներին), She has already done her homework (Նա արդեն կատարել է իր տնային աշխատանքը) և այլն:

բ) Մակրայաբար կիրառված որակական ածական+բայ՝ Դրաշալի էր մեկնաբանում, Վաս էին աշխատում, Արագ էին կողմնորոշվում: Նշենք, որ արդի անգլերենում fast-ը և hard-ը և ածական են, և մակրայ, հետևաբար կարող ենք ունենալ այսպիսի օրինակներ՝ Pet can run very fast (Փերը կարող է արագ վազել), Kate works hard (Քեյրը քրտնաշան աշխատում է):

գ) Դարակատար դերբայ+բայ՝ Վախեցած էր պատմում, Դոգնած էր թվում, համակատար դերբայ+բայ՝ Զքոսնելիս տեսա հեռավոր բարեկամիս, Մտածելիս հասկացած միալս: Դարակատար դերբայ+բայ կադապարին արդի անգլերենում թերևս համապատասխանում է բայ+ածական դերբայ կադապարը՝ She seemed tired (Նա հոգնած էր թվում), He listened frightened (Նա վախեցած լսում էր): Արդի անգլերենին, բնականաբար, բնորոշ չէ համակատար դերբայ+բայ կադապարը:

դ) Մակրայ+ածական կամ մակրայ՝ շատ ուժեղ, միշտ գեղեցիկ, չափազանց ready՝ միշտ պատրաստ, so far՝ այնքան հեռու և այլն:

ինչպես ժամանակակից հայերենում, այնպես էլ անգլերենում առդրական կապակցության լրացյալը կարող է լինել՝

ա) գոյական՝ անհոգ երեխա, բարձր գմահատական, նույնը նաև անգլերենում՝ a nice girl՝ սիրունիկ աղջիկ, a clever man՝ խելացի մարդ:

բ) Ածական՝ անչափ գեղեցիկ, շատ հպարտ, ավելի ուժեղ, անգլերենում՝ very beautiful՝ շատ գեղեցիկ, so high՝ այնքան բարձր:

գ) Թվական՝ շուրջ հիսունինգ, երկի քսան, գրեթե ուր, անգլերենում՝ maybe ten՝ երկի տասը, already hundred՝ արդեն հարյուր:

ե) Դերբայ՝ շտապ հազնվել, գերազանց կատարել, խորը քնած, լավ սովորող, անգլերենում՝ to do perfectly՝ կատարյալ անել, to work slowly՝ դանդաղ աշխատել:

գ) Մակրայ՝ այսքան դանդաղ, գրեթե մոտ, իսկապես եղբայրաբար, անգլերենում՝ so slowly՝ այնքան դանդաղ, already near՝ արդեն մոտ:

ի) Որոշ դերանուններ՝ այդ ամենը, անիսոս բոլորը, գոնես յուրաքանչյուրը, անգլերենում՝ if only each՝ գոնես յուրաքանչյուրը, of course the all՝ իհարկե բոլորը և

այլն:

Ընդհանրացնելով՝ կարող ենք նշել առդրական կապակցության հնարավոր դեպքերը արդի հայերենում և անգլերենում՝

ա) ածականով՝ երփներանգ ծաղիկներ, երջանիկ մանկություն, long days՝ երկար օրեր, unforgettable holidays՝ անմոռանայի արձակուրդներ:

բ) Թվականով՝ երեք մրցանակ,յոր ուղեգիր, six rings՝ վեց աշակերտ, ten places՝ տասը տեղ:

գ) Դերանունով՝ այս, այդ, այն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, այդքան, այնքան, ինչ-որ, ինչ-ին և այլն՝ այս դասագիրը, այդպիսի որակ, այնքան կարողալ, անգլերենում՝ so many books՝ այսքան գիրք, another singer՝ ուրիշ երգիչ և այլն: This և that ցուցական դերանունների բացառության մասին վերն արդեն նշվել է:

դ) Մակրայով՝ դանդաղ մոտենալ, վաղուց սպասել, to sing wonderfully՝ հրաշալի երգել, to wait for a long time՝ երկար սպասել:

ե) Դարակատար դերբայով՝ բացված վարդ, պատռված զգեստ, քնած երեխա:

գ) Ենթակայական դերբայով՝ պարող աղջիկ, սովորող աշակերտ, մտածող մարդ:

ե) Դամակատար դերբայով՝ աշխատելիս չշփոթվել, քնելիս հանգստանալ, պատմելիս չժիծադիլ:

Անգլերենում ունենք անորոշ դերբայով և ածական դերբայներով առդրական կապակցություններ՝ books to read՝ կարդալու գրքեր, a dreaming girl՝ երազող աղջիկ, written text՝ գրված տեքստ, a forgiven mistake՝ ներված սխալ:

ը) Վերաբերականով՝ իսկապես գեղեցիկ, գոնես ազնիվ, անգան խելացի, կարծես հակառակորդ, of course wonderful՝ իհարկե հրաշալի, even beautiful՝ անգան գեղեցիկ և այլն:

Տամար Պօղօսյան

## ЗАМЫКАНИЕ В АРМЯНСКОМ И В АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

Сравнение замыкания в армянском и в английском языках требует внимания и длительную работу, особенно когда мало соответствующей литературы об английском языке. Тема очень интересная. Мы исследовали замыкание в армянском и в английском, привели разные примеры и выяснили, что в двух языках есть общности и разные стороны замыкания.

Мы можем сказать, что в двух языках общности более интересные и многочисленные, чем различия. Даже удивительно, что в двух языках даже есть общие модели.

Tamara Poghosyan

## ADJOINMENT IN ARMENIAN AND ENGLISH

Comparison of adjoinment in Armenian and English demands attention and continual deliberation. The topic is very interesting. We studied adjoinment in Armenian and English, brought many examples, and found out that there are similarities and differences of adjoinment in two languages.

We can say that similarities are more interesting, than differences in both languages.

It is even surprising that there are so common models in two languages.